Հեռակա ուսուցման ֆակուլտետի ստեղծման պատմությունը, գործունեությունը և իրականացվող կրթական ծրագրերը

1938 թվականին Երևանում վերստին բացվում է ՍՍՀՄ ՆԳ ժողկոմիսարիատի միլիցիայի միջին հրամկազմի պատրաստման դպրոցը: Ուսման տևողությունը երկու տարի էր : Հետագայում այն վերանվանվում է ՍՍՀՄ պետանվտանգության նախարարության , ապա՝ ՍՍՀՄ ՆԳՆ միլիցիայի դպրոց: Դպրոցին հատկացվում է Մայիսյան փողոցի վրա գտնվող (Հանրապետության հրապարակից ոչ հեռու) մի երկհարկանի շենք: Դպրոցն ուներ հեռակա ուսուցման բաժին: 1954 թվականի վերջերին ՍՍՀՄ ՆԳՆ միլիցիայի Երևանի դպրոցը փակվում է: 1966 թվականին բացվում է ՍՍՀՄ ՆԳՆ միլիցիայի Երևանի հատուկ դպրոցը: Ուսման տևողությունը երկու տարի էր: Դպրոցն ուներ նաև հեռակա բաժին՝ ուսման երեք տարբեր տևողությամբ : Հատուկ դպրոցն ավարտածներն ստանում էին միլիցիայի լեյտենանտի կոչում և միջին որակավորմամբ իրավաբանի դիպլոմ : ՍՍՀՄ ՆԳՆ միլիցիայի Երևանի հատուկ դպրոցի առաջին պետը միլիցիայի գնդապետ Հրաչիկ Պետրոսյանն էր: 1967 թվականին դպրոցը տվել է հեռակա ուսուցման բաժնի առաջին 18 շրջանավարտներին:

1968-1990 թվականներին հեռակա բաժնի շրջանավարտների թիվը կազմել է 536:

Բազմիցս բացված, վերաբացված ու վերափոխված ուսումնական հաստատությունը 1990 թվականին վերանվանվում է ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոց՝ շարունակելով ՆԳ համակարգը համալրել բարձր որակավորում անցած կադրերով:

1991 թվականից մինչև 2000 թվականը տարբեր մասնագիտացումներով հեռակա ուսուցման բաժինը տվել է 603 շրջանավարտ: Ժամանակի թելադրանքով 2000 թ. օգոստոսից միլիցիայի բարձրագույն դպրոցը վերանվանվում է ՆԳՆ ակադեմիայի՝ միաժամանակ դառնալով գիտական կարևոր օջախ: Ակադեմիայի դասախոսական կազմը համալրված է ՆԳ համակարգի լավագույն մասնագետներով:

2000 թվականից մինչև 2019 թվականը հեռակա ուսուցման ֆակուլտետը տվել է 902 շրջանավարտ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտած շրջանավարտներից 5-ը ստացել են գեներալի կոչում: ՀՀ ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրել են հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտած 2 շրջանավարտ:

Տասնյակ շրջանավարտներ ղեկավարել և ղեկավարում են ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի և մարզային վարչություններ,ոստիկանության բաժիններ:

Ֆակուլտետի գործունեության հիմնական ուղղությունն է իրավագիտություն մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրով բարձր որակավորման մասնագետներ պատրաստելը, ուսուցման որակի միջազգային չափանիշների և կրթական գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը, կրթական չափորոշիչներին և առաջադրված խնդիրներին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացումը: